

## ԱՐԴԱԼՈՅՍ ԱՍՏԻԱԾԱՏՐԵԱՆ

## Ա Ռ Ա Մ Ը

ՅՈՒՇԵՐ ՈՒ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## II

Յայտնի է, որ Արամին Երեւանում ընտրեցին դիկտատոր։ Այդ ընտրութեան պատմութիւնը ուշագրաւ է նրանով, որ բոլորովին նման չէ դիկտատորների ընտրութեան պատմութեան։ Արամը ընտրուում է դիկտատոր ոչ միայն իր կամքից ու ցանկութիւնից դուրս, այլեւ հեռաւոր տեղեկութիւն իսկ չի ունենում այդ ընտրութեան մասին։ Աւելին. տեղեկութիւն չունէր ոչ միայն ինքը Արամը, այլեւ նրա կուսակցական մօտ ընկերները, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան մարմինները։ Եւ անդիտութիւնը պէտք է բացատրել նրանով, որ նախապատրաստական որեւէ աշխատանք որեւէ կողմից այդ ընտրութեան համար տեղի չի ունեցել, որեւէ դաւադրութիւն Ազգ. Խորհրդի կամ Յատուկ Կոմիտէի դէմ եղած չէ։ Ընտրութիւնը կատարել է յանկարծակի, անսպասելի անգամ ընտրողների համար։

Մի բազմամարդ հասարակական ժողովում, ուր քննութեան է առնեում Երեւանի համար ստեղծած ծանր դրութիւնը, մարդկանց մտքերն ու զգացմունքները լարւում են ծայր աստիճան։ Դրութիւնը թուում է այնքա՞ն յուսահատական, որ նրանց համար փրկութեան մէկ ելք է մնում - ամբողջ իշխանութիւնը կենտրոնացնել մի մարդու ձեռքը, տալ նրան արտակարգ լիազօրութիւններ եւ ամբողջովին ենթարկել նրան։ Այդ մարդը, ի հարկէ, Արամն էր։ Առանձնապէս աչքի ընկնող, ղեկավար դեր է կատարում այդ ժողովում քաղաքի պարետ Ա. Շահիսաթունին։ Արամի դիկտատոր հռչակելու որոշումը հանելով՝ ժողովականները Շահիսաթունու առաջնորդութեամբ եւ զինուրականների ու քաղաքացիների մասնակցութեամբ շարժում են դէպի Արամի բնակարանը՝ յայտնելու համար ժողովրդի կամքը։ Երբ այդ բազմութիւնը մտնում է Ցարսկայա<sup>\*</sup>) փո-

\*) Արամի մահից յետոյ այդ փողոցը՝ բաղաքային խորհրդի որոշումով անամենց Արամի փողոց։

դոցը, ուր ապրում էր Արամը, վերջինս իր բնակարանից դուրս եկած՝ գնում էր Ազգ. Խորհուրդ: Հեռակա նկատելով անբոխը եւ նըրա բորբոքած տրամադրութիւնը՝ Արամը, իր պատմելով, ինչ որ վատ ենթադրութիւններ է անում (մի քանի օր առաջ խփել էր Զոլախ Գէորգը, սաստիկ հալածւում էին նաեւ նրա աւաղակային հակումներ ունեցող տղաները եւ ուրիշներ, ինչպէս նաեւ այն բոլոր տարրերը, որոնք տրամադրիր չէին ենթարկելու Ազգ. Խորհրդի անունից արտած կարգադրութիւններին) եւ բնազօրէն ստուգում է՝ տե՞ղն է ատրճանակը: Բայց կասկածը ցրում է, երբ ճանաչում է Շահիսաթունուն եւ միւսներին: Սակայն շարունակում է տարակուսել. ի՞նչ են ուղում այդ մարդիկը. ի՞նչ է պատահել քաղաքում, որ իրեն յայտնի չէ:

Բազմութիւնը մօտենում է, նրա ներկայացուցիչները յայտնում են Արամին իրենց որոշումը, եւ «կեցցէ»ներով բարձրացնում ձեռքերի վրա ու տանում Ազգ. Խորհուրդ:

Ճաշից յետոյ, սովորական ժամին, գնացի Ազգ. Խորհուրդ (այն ժամանակ Ազգ. Խորհուրդը եւ Յատուկ Կոմիտէն աշխատում էին Արովեան փողոցի վրա, Նազարեան ու Բէհրութեան փողոցների մէջ գտնւող միակ մեծ երկյարկանի տանը - աջ կողմը Բէհրութեանից դէպի Նազարեան): Դեռ հեռակա զարմանքով նկատեցի Ազգ. Խորհրդի շէնքի առաջ խոնւած մեծ բազմութիւնը: Մօտեցայ: Լսում եմ, որ Արամը դիկտատոր է յայտարարւած, որ հէնց նոր են ցոյցերով ներս տարել: Ներս մտայ: Արամը շրջապատւած մի խոմբ մօտ եւ ոչ-մօտ մարդկանցով, դուրս է զալիս պատշգամբ, որտեղից խօսք է ուղղում փողոցում խոնւած հասարակութեան:

Նոյն օրը երեկոյեան հրաւիրւեց Ազգ. Խորհրդի, արտակարգ նիստ: Արամը մի քանի խօսքով պատմեց օրւայ անց ու դարձի մաւին: Ցիշում եմ. նրա խօսքը ցաւի ու վշտի շեշտ ունէր: Օրւայ դէպքը նա բացատրում էր իրը յուսալքւած, վհատւած հոգիների ապրումների տիսուր արտայայտութիւն: Վատ նշան էր համարում, երբ մարդիկ այդ ձեւով իրենց անճարութիւնն են խոստովանում եւ իրենց իրաւունքները յանձնում են մէկին՝ կապելով նրա հետ երկրի փրկութեան գործը: Ազգ. Խորհուրդը չպէտք է զնայ այդ ճանապարհով եւ ինքը, դրսի աչքում դիկտատոր, ո՛չ մի փոփոխութիւն չի մտցնելու գործող հաստատութիւնների մէջ. ամէն ինչ զնալու է նոյն ճամբով, երկրի տէրը մնալու է Ազգ. Խորհուրդը:

Հետեւեալ օրն երեկոյեան, Հ. Յ. Դ. Մրգաստանի (Երեւանի) կենտրոնական Կոմիտէի ժողովում էլ խօսք եղաւ նոյն ինդրի մասին: Արամը այստեղ եւս արտայայտւեց նոյն իմաստով. առանց Կ.

Կոմիտէի խորհրդի ու տրամադրութեան, առանց Ազգ. Խորհրդի գիտութեան ու հաւանութեան ոչի՞նչ չի կատարւի:

\*\*

Հէնց առաջին օրից Արամը հասարակական կարգերը ոտնահարողների նկատմամբ շատ որոշ դիրք բանեց: 1918 թ. Ակիզբաներն էին, երբ ոռուսական մեծ յեղափոխութեան մեղրամիւն արդէն անցել էր, հին օրէնքներն ու իշխանութիւնը վերացել էին, իսկ նորերը դեռ սահմանաւած ու կազմակերպւած չէին, երբ այդ անցողական ու որոնումների, միաժամանակ լքումների ու յուսահատութեան ըրջանում շատ շատերի համար այլեւս հեղինակութիւն չէր մնացել, երբ թուլացել էին բարոյական զսպանակները ու մոլի կրքերն ու ստորբնազներն էին արտայայտում՝ յենարան ունենալով բազկի ոյժը ու լկտի յանդզնութիւնը: Արամը անխնայ ու անողորմ էր նրանց հանդէպ. Զոլախ Գէորգի պարագան ցոյց էր տալիս, թէ Արամը չէր խնայում անդամ դաշնակցական, երեմն աչքի ընկած մարտիկներին, եթէ սրանք ի չարն էին գործ դնում իրենց դերերը: Զոլախ Գէորգի: Իր յանդզնութիւնը չափ ու սահման չունէր: Նրա անունը սարսափ էր ազդում շատերին: Անդամ իր նախկին խմբապետ, յայտնի մարտիկ Դալի Ղաղարը քաշւում էր նրանից: Միակ մարդը, որի հեղինակութիւնը անվերապահօրէն ընդունում էր՝ Արամն էր: Գայլի մազ ունեցող Գէորգը դառ էր դառնում, երբ մօտենում էր Արամին ու հետը խօսում: Ո՞վ գիտէ, գուցէ բնազդով զգում էր, որ Արամը միակ մարդն էր, որի ձեռքը կարող էր պատուհասել իրեն: Իր ալան-թալանի ու սրբկայութիւնների մասին, ի հարկէ, Արամը գիտէր: Ոչ թէ երես չէր տալիս, այլ սաստ ու չոր լեզու ունէր նրա համար, Յիշում եմ, թէ ինչպէս էր Գէորգը խնդրում ինձ տեսակցութիւն յաջողացնել Արամի հետ՝ իրեն արդարացնելու համար: Միայն մի անդամ Արամը համաձայնւեց ընդունել նրան իր բնակրանում: Գէորգը խնդրում էր չհաւատալ իր մասին տարածւած չարամիտ լուրերին եւ երեսը պարզ անելու համար՝ տալ իր խմբին որեւէ ծանր եւ պատասխանատու գործ (օրինակ Շարապիսանէ գնալ եւ ուղմամթերք բերել այստեղ մնացած ոռուսական հարուստ պահանջներից այն ժամանակ, երբ ճանապարհները սաստիկ վտանգաւոր էին): Արամը մերժեց՝ ասելով, թէ զոհ կը լինի, եթէ հասարակութիւնից այլեւս գանդատ չլսի նրա մասին:

Այնուամենայնիւ, հետագայում Արամը մի յանձնարարութիւն տւեց Գէորգին: իր խմբով նա պէտք է ուղեկցէր Զանդեզուրի համար Նախիջեւանի գծով ուղմամթերք տանող գնացքին: Գէորգը

յանձն առաւ, բայց ինքը անձամբ չդնաց խմբի հետ՝ ծածկելով այդ բանը Արամից։ Ուազմամթերք տանող գնացքը Շարուրում ենթարկեց խորտակման եւ կողոպտեց թուրքերի ձեռքով։ Լուրը հասաւ Երեւան ու բացւեց Գէորգի խաբերայութիւնը։ Այդ դժբախտ լուրը Երեւան հասնելու յաջորդ օրը վաղ առաւտեան, երբ, ըստ սովորականի, մտնում էի Ազգ։ Խորհրդի ընդհանուր գրասենեակը, լըսեցի Արամի ջղայնոտ, բարձր ձայնը նախադահութեան հարեւան սենեակից։ Դեռ գրասենեակի պաշտօնեաներից ոչ ոք չէր եկել։ Արամի ձայնի վրա արագութեամբ ներս մտայ ու զարմացած կանդ առիւ առաջին անդամն էի տեսնում Արամին այդ աստիճան վըրդովված, զայրացած վիճակում։ Զղայնացած անց ու դարձ էր անում փոքրիկ սենեակում անկիւնից-անկիւն ու ձեռքը թափահարելով յանդիմանում ու նախատում էր կոնավայտի վրա յենւած ու բոլորովին գունատւած Չոլախ Գէորգին։ Սենեակում, պատի մօտ, գըլ-խակոր, լուռ կանդնած էին երկու-երեք այլ խմբապետներ։ Արամի վրդովմունքն անզուսպ էր։ Նա ուղղակի թոյն էր թափում Գէորգի գլխին նրա «աննամուս» վարմունքի համար։ Սենեակի մթնոլորտը ծանր եկաւ ինձ։ դուրս եկայ եւ նստեցի կլից սենեակում։ Պարզ յիշում եմ Արամի վերջին խօսքերը։ «Ես կանիծեմ այն ժողովուրդի հէրը, որ շանսատակ չի անի ձեզ պէս դաւաճաններին»։ Ու դուրս եկաւ՝ աղմկով ծածկելով դուռը մնացողների երեսին։

Քիչ յետոյ ներս մտայ (Այդ սենեակում աշխատում էինք ես և Մուսինեանը)։ Սենեակում մնացողները կանդնած էին նոյն սառած վիճակում։ Լուռթիւնը խղեց Եապոնը։ «Չոլախ, շան որդի, բոլորը քու... են։ Էս թուքը տանե՞լ կը լինի՞...»։

Դրանից յետոյ էլ Չոլախ Գէորգը չուղղեց։ Նա շարունակում էր իր աւազակութիւնը ու շահատակութիւնները Երեւանի շրջանում։ Իր վերջը եղաւ խիստ ողբերգական։ Նա գնդակահարւեց Արամի հրամանով։ Այդ մասին Արամը յայտնեց իրեն դիկտատոր ընտրողներին ուղղած ճառում, երբ հասարակութեան միջից բողոքի ձեռով Գէորգի տղաներից մէկը հարց տեղ, թէ՝ կարելի՞ բան է օրը ցերեկով քաղաքի փողոցում մարդ խփել։ Արամը պատասխանեց այն մտքով, թէ՝ ով ներկայ բացառիկ ծանր պայմաններում չի ենթարկը երկրի իշխանութեան ու կը հետեւի Գէորգի օրինակին, նոյն պէս կը գնդակահարւի։



Ես լսել եմ, որ Արամը առաջ դիւրաբորոք ու ջղային մարդ է եղել։ Թէեւ Երեւանում մթնոլորտը չափազանց ջղայնացնող էր եւ

ժողովութեղը արտակարդ լարւած վիճակ էր ապրում, այնուամենայնիւ Արամը իր առօրեայ հասարակական աշխատանքների մէջ միշտ հանգիստ էր ու զուսպ: Նա զբաղւած էր առաւօտից մինչեւ երեկոյ, սաստիկ յողնում, բայց ո՛չ ոք նրա բարկացկոտ ձայնը չէր լառմ, ո՛չ ոք չէր գանդատում նրա վերաբերմունքից, ո՛չ ոք չի տեսել նրա կոպտութիւնը: Երեւանի Ազգ. Խորհրդի իշխանութեան շրջանում ես յիշում եմ երեք դէպք, երբ Արամը իր սովորական պաղարիւութիւնը կորցրել է եւ դուրս եկել իրենից - սաստիկ յուզել, վրդովել է: Մէկի մասին պատմեցի վերը: Միւս պատմութիւնը այս է: Երեւանում կային բաւականաչափ զինուրներ, որոնք այս կամ այն մէտածառով հեռացել էին ճակատի զօրամասերից: Ազգ. Խորհրդի կարգադրութեամբ դրանք բոլորը հաւաքւում եւ տեղաւորում էին կազմակերպող զօրամասերում, որոնք աստիճանաբար նորից ճակատ պիտի ուղարկւէին: Զինուրներից շատերը գոհ չէին այդ բանից - տրամադիր չէին նորից ճակատ դառնալու եւ իրենց այդ տրամադրութեամբ դիտաւորեալ կերպով վարակում էին միւսներին. կատարւում էր ինչ որ բոլցեւիկեան խմորում: Արամի կարգադրութեամբ այդ շարժումը խեղզուում է, պարագլուխները պատճուում: Խստութիւնները դասալիքների մէջ դժգոհութիւն են առաջ բերում: Նրանց միանում են քաղաքի մութ տարրերը: Եւ ահա մի երեկոյ, այդ դժգոհ տարրերը աղմուկ-ժխորով հաւաքւում են Ազգ. Խորհրդի շէնքի (հետազայում պարլամենտի) դիմաց այն ժամանակ, երբ Ազգ. Խորհուրդը նիստ ունէր, եւ «պահանջներ» են անում, «սպառնալիքներ» կարդում: Արամը, կոահելով թէ բանն ինչումն է, սաստիկ զայրացած, թուաւ տեղից ու դուրս վաղեց, սենեակից դէպի ցած՝ բարձրածայն պարսաւելով խոռվարաբներին: Մեծ դժւարութեամբ յաջողւեց նրան ուժով յետ բերել եւ թոյլ չտալ ցած իջնել: Իսկ յուցարարներին ցրեց Ազգ. Խորհրդի պահակախումբը: Իր տեսակի մէջ այդ դէպքը առաջինն ու վերջինն էր: Երբորդ դէպքի մասին պատմելը համարում եմ վաղաժամ: Թէեւ պէտք է ասել, որ այդ դէպքը Արամին ոչ այնքան վրդովեց, որքան վշտացրեց:

\*\*

Ոչ-զաշնակցական Երեւանը Արամին չէր ճանաչում: Նրա մասին, ի հարկէ, լսել ու կարգացել էր, բայց միայն այդքանը: Եւ ահա Երեւան գալուց ու գործի անցնելուց յետոյ, անհաւատալի կարճ ժամանակամիջոցում նա ուղղակի նւաճեց ազգային-հասարակական կառքին լծւած բոլոր հոգիները: Նրա հեղինակութիւնն ու ազդեցութիւնը աճում էր օրից օր. նրա հմայքի դէմ խոնարհում էին ամենը:

Բնական է, որ դաշնակցականները դաղափարակից տաղանդաւոր գործչի մասին հիացմունքով խօսէին։ Բայց Արամի մեծութիւնը, ի միջի այլոց, վկայում է եւ այն հանգամանքը, որ նրա հետ աշխատող ոչ-դաշնակցականներն էլ անպայման ենթարկւում էին նրա հեղինակութեան ու, պատեհ առթիւ, միայն դովասանքի ու հիացմունքի խօսք անում նրա մասին։

Միայն մի երկու օրինակ։

Արամը մեռաւ 1919 թ. յուն. 28ին։ Մահւան տարեղարձին Երեւանում հրատարակուղ «Յառաջ»ի խմբագրութիւնը թերթի մի յատուկ համար նւիրեց Արամի յիշատակին։ Ինձ էւս առաջարկեց մի բան գրել։ Ես այն ժամանակ անկարող էի Արամի մասին մի տող անդամ գրի առնել։ Բայց, նախապէս խօսելով խմբագրի հետ, խնդրեցի Գ. (Գիգա) Պետրոսեանին «Յառաջ»ի այդ համարի համար գրել մի յօդւած։ Գ. Պետրոսեանը իր քաղաքական աշխարհահայեցքով կաղէտ էր։ Երեւանում աշխատում էր ժողովրդականների հետ ։ Վոլոխութեան սկզբնական շրջանում, ոռուս տիրապետութեան ժամանակ, Նահանգական Գործադիր Կոմիտէի աչքի ընկնող անդամներիցն էր։ Նոյն ժամանակները ժողովրդական կուսակցութիւնը Երեւանում հրատարակում էր ոռուսերէն մի թերթ, որի վիաստական խմբագրին էր։ Հետագային, Հայաստանի անկախութեան օրով, մտաւ Քաջազնունուր դահլիճի մէջ, իբրեւ արդարադատութեան նախարար։ Իր շրջանում աչքի էր ընկնում իրը չնորհալի իրաւաբան։ Իմ գիմումը նա յարգեց եւ մի երկու օր անցած բերեց ոռուսերէն լեզով (Հայերէնին լաւ չէր տիրապետում) մի ընդարձակ յօդւած, որ կատարեալ ներբող էր հանգուցեալի յիշատակին։ Ինձ համար այդ անսպասելի էր։ Պետրոսեանը ճանաչւած էր իբրեւ շատ շիտակ ու անաչառ մարդ։ Ես գիտէի, որ անցեալում, դեռ Ազգ. Խորհրդի իշխանութեան օրով, նա առիթ էր ունեցել բողոքելու Արամի դէմ եւ կամովին հեռացել էր մի ժողովից, ուր ներկայ էր գտնւել Արամի հետ եւ խիստ դժգոհ մնացել վերջինիս մի վարմունքից այդ ժողովում։ Ես կարծում էի, որ Պետրոսեանը, իբր անկեղծ մարդ, զնահատելով հանդերձ Արամի արժանիքները կը խօսի նրա մասին զուսպ ու պաղարիւն ձեւով, ցոյց տալով նաեւ նրա գործունէութեան վրիպումները։ Ես չծածկեցի Պետրոսեանից այդ ամենը եւ ստացայ մօտաւորապէս այս պատասխանը։

- Ես բնաւ չեմ առաջնորդւել այն ժաքով, թէ նման դէպերում միա՛յն լաւը պէտք է գրել։ Ոչ։ Գրել եմ այն, ինչ թելագրել են ինձ Արամի մասին ունեցած տպաւորութիւններս։ Դուք ակնարկում էք Ազգ։ Խորհրդի ժողովում տեղի ունեցած դէպքը, երբ ես բողոքեցի

Արամի վարմունքի դէմ եւ զայրացած հեռացայ ժողովից : Այո՛, այն ժամանակ Արամի վարմունքը Զուբեանի նկատմամբ կոպիտ ու վիրաւորական թւաց ինձ : Բայց ես Արամի այդ վարմունքը հասկացայ յետոյ, երբ սկսեցի աշխատել նրա հետ միասին : Ես այժմ ոչ մի կասկած չունեմ, որ ինչ որ Արամն անում էր՝ անում էր հասարակական շահերի թելադրանքով . անձնական միտումներ նրա վարմունքները չունեին ու այդ պատճառով նեղանալ, վիրաւորւել նըրանից անվայել էր հասարակական գործչի համար : Ես Արամին պատկերացնում եմ իբր մի հակայ տարրերային ոյժ, որը հաստատում քայլերով առաջ էր գնում՝ քաշելով իր յետեւից իր շրջապատը : Աղդ . Ոորհրդի օրով նա յաճախ իր զարմանալի առողջ բնազդով արհամարհել է մեր օրէնքներն ու կարգերը՝ յանում մեր ժողովրդի շահերի : Սովորական մարդը այդպիսի բան չի կարող անել : Արամի այդ ոյժը ես ամբողջ ժամանակ զգում էի, երբ նրա հետ միասին աշխատում էի Քաջազնունու կառավարութեան մէջ : Քանի՛ անդամ կառավարութեան նիստերում դիտելով ու լսելով Արամին՝ հիացած մտածում էի՝ այս մարդը թեմական դպրոց է աւարտել ու Տաճկաստանի խորքերում անցկացրել իր կեանքը : Կառավարութեան անդամները բոլորն էլ կրթութեամբ Արամից բարձր էին, սակայն նիստերում յաճախ իշխում էին նրա մտքերը : Արամը իր բը նական խելքով մեր բոլորիցն էլ շա՛տ շա՛տ բարձր էր : Քաջազնունու կառավարութեան մէջ աչքի էր ընկնում եւ կարճիկեանը, բայց ոչ Արամի հետ համեմատած : Կարճիկեանի անունը յիշեցի, որովհետեւ Արամին ամենից լաւ նա էր հասկանում եւ յաճախ Արամի մըտքերը նրա բանաձեւով էին անցնում :

Գ. Պետրոսեանի յօդւածը ես յանձնեցի «Յառաջ»ի խմբագրին (Ա. Վրացեան) : Զդիտեմ ինչու «Յառաջ»ի խմբագրութիւնը իր մըտագրութիւնը չիրագործեց, եւ Արամի յիշատակին խոստացւած համարը լոյս չաեսաւ :

Մինչեւ Քաջազնունու Թիֆլիսում կազմած կառավարութեան երեւան գալը, երեւանում ամիսներից ի վեր գործում էր Արամի նախաձեռնութեամբ ու դիմաւորութեամբ կազմւած կառավարութիւնը : Նախազահն ու զինուրական վարիչը ինքը Արամն էր : Նախ քան վերջին պաշտօնը յանձն առնելը, նա ցանկութիւն յայտնեց, որ այդ պաշտօնը տրւի մի հեղինակաւոր զինուրականի : Այդ ցանկութիւնը Արամը յայտնում էր նախ՝ որովհետեւ շատ էր ծանրաբեռնւած ու Փիղիքապէս հնարաւոր չէր ամէն տեղ հասնել, եւ ապա՝ նախատեսնում էր, որ իբեն չճանաչող զինուրական շրջանակներում (յատկապէս սպայութեան մէջ) խօսք ու զրոյց է լինելու եւ ոչ ցանկալի

տրամադրութիւն ստեղծւելու : Արամին ընտրողները չյարգեցին նրա այդ առաջարկը՝ քաջ գիտակցելով, որ այն պայմաններում ոչ ոք կարող էր փոխարինել նրան ու կատարել նրա դործը : Սակայն Արամի նախատեսութիւնը արդարացաւ : Կարծ ժամանակ անցած սպայական շրջաններից սկսեցին լսել դժողովութեան ձայներ թէ՝ որքան էլ յարգելիս լինեն Արամին ու խոնարհւեն նրա առաջ, այնուամենայնիւ զինորական վարիչը զինորական մասնադիտ պէտք է լինի : Արամը Հ. Յ. Երեւանի Կենտրոնական Կոմիտէում նորից բարձրացրեց զինորական վարիչի պաշտօնը զինորականի յանձնելու հարցը եւ այս անդամ կտրուկ եւ անառարկելի ձեւով : Որոշեց դիմել զօրավար Սիլիկեանին : Կ. Կոմիտէի նախագահութեան յանձնարարութեամբ ես այդ առթիւ եղայ զօր . Սիլիկեանի մօտ : Ահա մեր խօսակցութիւնը էական գծերով .

— Ինչո՞ւ է Արամը հրաժարւում, հետաքրքրւեց Սիլիկեանը, նախապէս հրաժարւելով իրեն առաջարկւած պաշտօնից : Երբ պատճառն իմացաւ, ասաց, որ լսել է այդ դժողովութիւնները, բայց ո՛չ մի արժէք չի տռել նրանց :

— Դա ժամանակաւոր բան է . դժողովուները չեն ճանաչում Արամին, երբ ճանաչեն, կը համոզւեն, թէ նա միակ կարող մարդն է այդ պաշտօնի համար : Ես ինչո՞ւ եմ հրաժարւում . որովհետեւ մէկ է՝ ես ինքու առանդ Արամի ոչինչ չեմ անելու : Ես այժմ էլ առանց Արամի ոչ մի կարեւոր քայլ չեմ անում, իսկ վարիչի պաշտօնը յանձն առնելու պարագայում գրասենեակս տեղափոխելու եմ նըրա մօտ : Ո՛չ մի զինորական վերաբերու ոչ ոքի չի տայ ա՛յն, ինչ որ ունի Արամը : Նրանից յարմար վարիչ մեղ համար չէք գտնի : Ես ինքու անձամբ կը խնդրեմ, որ նա չթողնի այդ պաշտօնը :

Եւ Արամ մնաց իր պաշտօնում . նրան փոխարինող չգտնեց : Շատ բնորոշ է նաեւ Յովհաննիս Մելիքեանի վերաբերմունքը դէպի Արամը : Յ. Մելիքեանը ժողովրդական կուսակցութեան Երեւանի ականաւոր, աչքի ընկնող դէմքերից էր : Աղդ . Խորհրդի օրով սկզբից մինչեւ վերջ ամենազործունեայ աշխատաղներիցն էր՝ վարելով միշտ պատասխանատու եւ ծանր պաշտօններ : Պարենաւորման ու ելեւմը-տական հարցերում Մուսինեանի հետ նա կազմում էր Արամի աջ բաղուկը : Բնաւ չափաղանցութիւն չի լինի, եթէ ասեմ, որ Յ. Մելիքեանը աւելի շատ էր գնահատում Արամին, քան թէ մենք՝ դաշնակցականներս : Անսահման վստահութիւն ու հաւատ ունէր դէպի Արամի կարողութիւնները :

Երեւանի ոչդաշնակցականների վերաբերմունքը դէպի Արամը ուսանելի ու խրատական էր : Յիշում եմ . մի անդամ Արամը, խո-

բապէս վշտացած մի դէպքից, երկու օր չերեւաց Ազգ. Խորհրդում: Լուր տարածւեց թէ նա հեռանալու է երեւանից: Արամի երկու օրւայ բացակայութիւնը իսկական խուճասղ առաջ բերեց Ազգ. Խորհրդի շըաններում: Դաշնակցականներից աւելի մտահոգւած էին ոչպաշնակայնները: Արանք մտածում էին պատղամաւորութիւն ուղարկել Արամի մօտ, որ շարունակէ վարել գործերը: Սակայն Արամը կանխեց այդ բանը եւ վերադարձաւ իր աշխատանքներին:

\* \*

Այն օրերին երբ Վրաստանի քաղաքական գործիչները պատրաստում էին իրենց երկրները անկախ հոչակել՝ այլեւս աննպատակայարմար համարելով իրենց համար Անդրկովկասի միութիւնը (Աէյմ), այն օրերին, երբ Թիֆլիսի հայոց Ազգային Խորհուրդը, լքւած հարեւաններից, շւար ու յուսահատ վիճակ էր ապրում, — այդ օրերին ալեւոր Մասիսի աչքի առաջ, Արարատեան դաշտում, Սարդարապատի տակ ու նրա շուրջը զարմանալի անցքեր էին տեղի ունենում:

Երեւանի ու նրա շուրջը խմբւած հայութիւնը մահու ու կենաց սպայքարի էր ելել իր դարաւոր ու նամարդ թշնամու դէմ, որ եկել ու բախում էր Վաղարշապատի ղոնները: Ժողովուրդների կեանքում լինում են վայրկեաններ, որոնք նորքից ակոսում են նրա հոգին ու անջնջելի կերպով տպաւորւում հետագայ սերունդների յիշողութեան մէջ: Վայրկեաններ, երբ ժողովուրդը հանդէս է բերում բարոյական հոյակապ կորով, երկաթէ կամք, բաղկի անյաղթելի ոյժ: Ամէն մի ժողովուրդ իր պատմութեան ընթացքում ունեցել է հերոսական դրւագներ, բայց կան հերոսութիւններ, որոնք հաւասար են հրաշքի: Հստ ամենայնի բնական պէտք է համարւէր, եթէ Երեւանի հայութիւնը պարտէր Սարդարապատի տակ: Եւ ո՛չ մէկ լեզու հընարաւոր կը համարէր դատապարտութեան խօսք ասել նրան: բոլոր պայմանները դասաւորւել էին յօգուտ տաճիկների եւ ի վնաս հայերի: Անգամ այսօր, տարիներ յետոյ, մարդ առանց ներքին դողի անկարող է յիշել նոյն օրերի յուսահատական, դժոխային պայմանները: Աշխարհից կտրւած, շրջապատւած հազարաւոր անտուն ու անտեղ հարազաններով, պարենաւորման դժոխային կացութիւն, հաղորդակցութեան ողբալի միջոցներ, ո՛չ մի տեղից ոչ մի մխիթարական, յուսատու ձայն, ու դրա փոխարէն՝ հառաչանքներ, արտասուլքներ, անվերջ վիշտ: Երեւանի գործիչները մնացել էին խաւարում: Նրանց ունեցած տեղեկութիւնները աւելի հեռու չէին գնում, քան Երեւանի այն օրերի իշխանութեան սահմանները:

ի՞նչ էր կատարում այդ սահմաններից գուրս՝ անյայտ էր։ Բոլոր դռները գոց էին, բանալինները՝ թշնամու ձեռքը։ Հնարաւո՞ր էր մտածել յաղթութեան մասին։ Երեւանում ոչ ոք այդ մասին չէր մըտածում։ Ինքնապաշտպանութիւն - այդ էր միակ մտահոգութիւնը։ Թոյլ չտալ, որ տաճիկը աւելի առաջանայ, մտնի Երեւան եւ ազատ մնացած հայկական շրջանները։

Զարմանալի էր Արամն այդ օրերին։ Համատարած յուսալքումի այդ շրջանում նա մնաց մի՛շտ բարձր-յուսադրող, ոգեւորող, հաւատ ու եռանդ ներչնչող։ Ահաւոր վտանգի նախօրեակին Երեւանի հայութիւնը չունէր իր մէջ թագնւած ուժերի գիտակցութիւնը։ Կերոսութեան հուժկութ ալիքը համակեց նրան, երբ սկսւեց ճակատագըր-բական բախումը թշնամու հետ։ Արամի մէջ այդ ոյժը ճառագայթում էր սկզբից եւ եթ։ Նա շարունակ ոտքի վրա էր։ հանգիստը ինչ է մոռացել էր։ Ճակատը նրա մտահոգութեան միակ առարկան էր։ Թէեւ ճակատի ու թեկունքի միջեւ առանձին տարբերութիւն էլ չկար, բայց Արամի միտքը կլանւած էր առաջին գիծը ամուր ու անսասան պահելու հոգսով։ Անընդհատ յարաբերութեան մէջ էր զլամաւոր շտարի հետ, որը նստած էր Վաղարշապատում։ Արամը իր շնչով վարակում էր ամենքին. ո՛չ ոչ չէր խնայում հնարաւորը։ Երեւանը իր ունեցածը տրամադրել էր Սարդարապատի անապատներում թշնամուն կուրծք տուղ իր հերոսներին - տներից կապոցներով ու ամաններով պաշար էր ուղարկում, բեռներով՝ թարմ ջուր։ Թիկունք ու ճակատ հոգով ու մարմնով միացել էին իրար։ Ստեղծւել էր հոգեբանական մի մթնոլորտ, ուր ամէն ինչ յիշեցնում էր պարտածանաչութեան ու պատասխանատութեան մասին։ Այդ մթնուրտը գնալով թանձրանում է, մարդիկ բարոյապէս աճում կերպարանափոխուում են, ուղղակի անձանաչելի դառնում։ Հայ զինուրը մայիսի սկզբներին եւ այդ նոյն զինուրը մայիս վերջերին իր հետ չհամեմատող մեծութիւններ են։ Զօր. Սիլիկեանը, որ կոիւներից առաջ Ազգ. Խորհրդին ու Նազարբէղեանին տւած զեկուցումներում միշտ յուսահատում էր<sup>\*)</sup>, ճակատամարտի օրերին ու այնուհետեւ Ղարսի մասին էր մտածում . . . .

Հայ ժողովուրդը Սարդարապատի տակ ապրեց հերոսական վայրկեաններ եւ կերտեց հայոց պատմութեան փառաւոր էջերից մէկը։

Հոգեբանական այս վերելքի օրերին էր, որ եկան զինադադարի

\*) Մի բան, որ Արամը չէր ներում ու չներեց մինչեւ վերջ դեպի Սիլիկեանը նա սանեց, քեւ ցոյց չէր տալիս։

եւ հաշտութեան պայմանները։ Որքա՞ն դաժան, որքա՞ն սարսափելի էին այդ պայմանները։ Որպիսի՛ զայրոյի՛ ու ցասում առաջ բերին ամէն կողմից։ Ճակատից հեռախօսագրով ինդրում էին Ազգ։ Խոր-հըրդին չհամաձայնւել ու չընդունել թիւրքերի պայմանները։ Զօրա-վար Սիլիկեանը տրամադիր էր կոփւր շարունակել, եթէ Երեւանի Ազգային Խորհուրդը հրաման տար։ Ազգ։ Խորհուրդը, սակայն, չտեղ։ Արամը ողբերգութիւն էր ապրում։ լուռ էր ու մռայլ։ միայ-նակութիւն էր վինտրում։ սպասում էր Նազարեէդեանին։ Նրան կաշ-կանդել էր այն, որ որեւէ տեղեկութիւն չունէր դրսի աշխարհից……

Երբ բանը վերջացաւ նրանով, որ տաճիկները հաստատւեցին Ե-րեւանից 6-7 վերստի վրա, քաղաքի համար սկսւեցին մղձաւանջային օրեր։ Ո՞վ է կասկածում այսօր որ եթէ Գերմանիան չպարտէր, կամ քիչ երկար դիմանար, տաճիկները չէին մտնելու Երեւան։ Սար-դարապատից յետոյ նրանց խանդարեց Բագուն, իսկ Բագութից յետոյ՝ Գերմանիայի պարապութիւնը։ Բայց Երեւանը ո՛չինչ չդիտէր – ո՛չ Բագուի, ոչ Գերմանիայի մասին եւ չէր կասկածում, որ թիւրքերը մտնելու են Երեւան։

Ազգ։ Խորհրդի անդամներից մի քանիսի մէջ միտք է ծագում հեռացնել Արամին քաղաքից՝ անակնկալի եկած դէպքում նրան փըր-կած լինելու նպատակով։ Նրանք մտածում էին, որ Երեւանից յետոյ ազատած ժողովուրդը, եթէ դլուխ ունենայ, կը կազմակերպէ իր ինքնապաշտպանութիւնը եւ երկար կը դիմանայ, հակառակ պարա-գայում հեշտութեամբ կը կորչի, կը փչանայ։ Իսկ քաղաքի համար, քանի կանգուն է, Արամը կարող էր աշխատել դրսից։ Այդ խօսակ-ցութիւնը տեղի էր ունենում Արամի առանձնասենեակում, հետազ-յում պարլամենտի նախագահութեան սենեակը։ Արամը նստած էր դլուխը յենած ձեռքերին։ Ես այն տպաւորութիւնն ունէի, որ արւած առաջարկութիւնը ու այդ առթիւ եղած խօսակցութիւնը նրան բնա՛ւ չէր զրադեցնում։ նա ուրիշ բանի մասին էր մտածում։ Մէկ էլ վեր կացաւ տեղից եւ, կարծես, ընդհատելով իր միտքը՝ հանգիստ ու տիսուր ձայնով ասաց, թէ իր համար անընդունելի, անհնարին բա-ներ ենք մտածում, թէ իրեն համար գերազաւելի է տաճիկների ձեռքով կախաղան բարձրանալ Ազգային Խորհրդի չէնքի առաջ (մա-տով ցոյց տւեց չէնքի դիմացը), քան թէ հեռանալ քաղաքից ։ Քա-ղաքից հեռանալու մասին չէ, որ պէտք է մտածել, այլ քաղաքը փրկելու մասին։



1918 թւի վերջերին եւ 1919ի սկիզբներին բծաւոր տիֆը Երեւա-

նում առատ հունձ էր անում : Նրան զոհ դնաց եւ Արամը : Թէ իր պաշտօնի բերումով - ներքին գործոց նախարար - եւ թէ, նամանաւանդ, իրբեւ հասարակական կենտրոնական դէմք, նա շարունակ յարաբերութեան ու չփման մէջ էր բաղմաժիւ մարդկանց հետ՝ աղդաբնակութեան բոլոր խաւերից : Եւ որովհետեւ իր մասին մտածելու սովորութիւն չունէր, զարմանալի չէ բնաւ, որ նա էլ վարակւեց տիֆով, բայց հիւանդութեան սկզբի օրերը մնաց սովքի վրա :

1918ի դեկտեմբերին վախճանւեց (նոյնպէս բծաւոր տիֆից) Սարդիս Օհանջանեանը, դաշնակցական հին գործիչներից մէկը : Արամը ուղեկցում է ընկերոջ դադաղին, բայց մինչեւ գերեզմանատուն դնալ չի կարողանում . հիւանդութիւնը իրեն զգալ է տալիս . նա կէս ճամբից վերադառնում է տուն ու պարկում՝ առանց իմանալու հիւանդութեան բնոյթը : Երբ պարզեց, որ հիւանդութիւնը տիֆ է, նա չափազանց անսարքեր վերաբերմունք ցոյց տուց՝ վիշտը, կասկածը, երկիւղը մինչեւ վերջ խորթ մնացին նրան : Ընդհակառակը, տրամադրութիւնը լաւ էր ու իր տրամադրութեամբ վարակում էր մտերիմներին ու այցելուներին էլ :

Բծաւոր տիֆը այդ տարի Հայաստանում յատուկ դաժանութեամբ էր արտայայտում եւ աջ ու ձախ կոտորած էր անում : Բաւական է ասել, որ Երեւանի պէս փոքր քաղաքում չորս բժիշկ (Անդրէասեան, Զաքարեան, Շահպաղեան, Նալբանդեան) զոհ դնացին այդ հիւանդութեան : Բնական է, որ մարդիկ զգուշանում էին, իսկ հիւանդները՝ ահ ու սարսափով անցկացնում իրենց օրը :

Երբ Արամի հիւանդութիւնը պարզեց, Երեւանի բժիշկներից շատերը ինքնարերար ոտքի կանգնեցին . դրանց մէջ էր եւ բժ . Ս. Կամսարականը : Սա միաժամանակ բժշկում էր եւ պետական վերահսկիչ Մինաս Բերբերեանին, որը նոյնպէս հիւանդ էր բծաւոր տիֆով : Այդ նոյն օրերին իմ ընտանիքում էլ հիւանդ կար - նոյնպէս տիֆով - որին բժշկում էր Կամսարականը, որը լաւ բժշկի համբաւ ունենալուց զատ՝ մի շատ համակրելի ու չփտակ անձնաւորութիւն է : Որեւէ կուսակցութեան չէր պատկանում : Բժիշկը նախ այցելում էր Բերբերեանին, յետոյ Արամին, ապա գալիս էր մեղ մօտ : Բնական է, որ ես ամէն անդամ հետաքրքրում էի Բերբերեանի եւ Արամի առողջութեամբ, թէեւ վերջինի մօտ լինում էի օր ու մէջ : Բժ . Ս. Կամսարականը ամէն անդամ էլ առանձին բաւականութեամբ էր խօսում Արամի մասին .

- Զարմանալի մարդ է . ի՞նչ հիւանդ, - ես նրա մօտ հանդստանում եմ . նամանաւանդ Բերբերեանից յետոյ . սա ամբողջ ժամանակ դժգոհում է, գանդատւում, սարսափում իր վիճակից, յիշում է իր

լաւ անցեալը եւ ողբում ներկան։ Սիրտս ճնշւում է նրա մօտ։ Իսկ Արամի մօտ ամբողջ ժամանակ տրամադրութիւնս լաւ է լինում։ ո՛չ մի գանգատ, ո՛չ սրտնեղութիւն։ Հիւանդ տեղովը մեզ, բժիշկներիս ձեռք է առնում, ծաղրում է, որ բժերը լաւ չպահեցինք եւ նրանք էլ խոռվեցին ու փախան, լաւ «հեքիմ» չենք։ Խօսում է այլեւայլ նիւթերի մասին, իր հիւանդութիւնով, կարծես, չի հետաքրքրուում։ Այո՛. զարմանալի մարդ է Արամը։

Այդ նոյն օրերին պառկած էին, ի միջի այլոց, եւ Սահակ Թոռ բոսեանը, ինժ. Թորդոմ Նիկողոսեանը, քաղաքային վարչութեան անդամ Յակոբ Յարութիւնեանը (վերջին երկուսը վախճանւեցին), որոնց այցելում էի յաճախ։ Երբ զալիս էի Արամի մօտ, միշտ հետաքրքրուում էր նրանց վիճակով։ Իսկ երբ հարցնում էի իր մասին, միշտ էլ պատասխանում էր. «Լաւ եմ»։ Եւ այդ ասում էր ոչ թէ նրա համար, որ լաւ էր, այլ որպէսզի մենք չանհանդստանանք։ Իսկ իրապէս ամենեւին էլ լաւ չէր. դրութիւնը գնալով ծանրանում էր, եւ վերջը հիւանդութիւնը բարդացաւ ու ծայր աստիճան սաստկացաւ։ Հիւանդութեան 18րդ օր կորցրեց գիտակցութիւնը եւ գրեթէ մինչեւ վերջ մնաց այդ վիճակում՝ օրհասական պայքար մզելով մահւան դէմ։ Եւ մահը յաղթեց. յունաւր 29ին Արամը այլեւս չկար։

Գիտակցութիւնը կորցնելուց յետոյ, մի երկու անդամ, շատ կարճ ժամանակով ուշքի եկաւ։ Սկզբներում Արամի վիճակը բժիշկներին մտահոգութիւն չէր պատճառում։ Վստահ էին, որ նրա առողջ կազմւածքը վերջ ի վերջոյ յաղթանակելու է։ Բայց երբ ուշագնացութիւնը տեւեց շատ երկար, նրանց սիրտը կասկած մտաւ։ Եւ այդ կասկածը նրանք բարձրաձայն յայտնեցին հիւանդի մօտ, վստահ, որ նա չի կարող լսել։ Սակայն, որքան մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ հիւանդը նկատեց։

— Ի՞նչ էք ասում։ ուաքս գետնովը տամա՞ սարերը կը դողման։ Եւ այնուհետեւ բժիշկները, որքան աշխատեցին, այլեւս ոչինչ չլսեցին նրանից։

Թէեւ քաղաքն այն օրերին լի էր հիւանդներով, դրեթէ ամէն օր յուզարկաւորութիւններ էին տեղի ունենում եւ մարդկային սիրտը քարացել էր, բայց Արամի վիճակով հետաքրքրուում էին ամենքը եւ ուշազրութեամբ հետեւում նրա հիւանդութեան, որի բարդանալով մարդիկ սկսեցին անհանդստութիւն արտայայտել։ Երբ Արամը դի-

\*) Բծաւոր տիֆով հիւանդների մարմինը, սովորաբար, ծածկուում է մանր բը-ձերով, որոնք յետոյ անցնում են։ Արամի վրա երեւացին միայն մի քանի հատ եւ շուտով չքացան։

տակցութիւնը կորցրեց, քաղաքում ծայր տւին չարագուշակ լուրեր : Անձամբ երկու-երեք անդամ, փողոցով անցնելիս, լսել եմ Արամի մահւան մասին ա'յն ժամանակ, երբ բժիշկները դեռ յոյզը չէին կորցրել : Այդ լուրերը, չգիտես ի՞նչ ճանապարհով, հասնում էին եւ Արամի ականջին : Մի օր, մի քանի վայրկեան ուշքի դալով՝ նա կանչում է մօտը կնոջը եւ հարցնում .

- Լսեցի՞ր, Կատիւշա .

- Ի՞նչ, Արամ .

Ժողովուրդը ասում է՝ Արամը մեռաւ :

Եւ նորից ընկղմւում մոռացութեան մէջ :

Դրանից առաջ էլ, երբ նոյնպէս ուշքի է դալիս, հարցնում է Ռոստոմի մասին<sup>\*)</sup> : Տիկինը նրան ուրախացնելու նպատակով պատասխանում է, թէ Ռոստոմը շուտով դալու է երեւան :

- Դէ՛, հալաւս պատրաստի՞ր . Ռոստոմը որ դայ, վեր եմ կենալու, ասում է Արամը :

Եւ դարձեալ ուշքը դնում է :

Բժ . Տէր-Յակոբեանը (Գրօ) պատմում էր, որ Արամի մահւանից մի քանի օր առաջ, հիւանդին քննելիս, նկատում է, որ նա ուշքի դալու փոքրիկ նշաններ է ցոյց տալիս : Փորձում է հետը խօսել :

- Արամ, Արամ, ինչպէ՞ս ես, կրկնում է մի քանի անդամ :

- Լաւ եմ, լաւ, վերջապէս, հազիւ լսելի ճայնով պատասխանում է հիւանդը :

Արամի վերջին խօսքն էր այդ . . . :

Նա մեռաւ յունար 29ին, ցերեկւայ ժամը 3ին : Բօթը ինձ հաղորդեցին հեռախօսով . «Արամը վախճանւեց» : Երբ մի երկու ըոպէ յետոյ մօտենում էի Արամի բնակարանին, այնտեղից դուրս էին դալիս Յ . Քաջազնունին եւ Ալ . Սահակեանը : Ներսը, ընդարձակ սրահի մի անկիւնում, լուսամուտի մօտ, տիսուր, մտազբաղ կանգնած էր բժ . Բաբալեանը : Արամի ննջարանը տանող դուռը բաց էր : Ինքը, անչչացած, պառկած էր մահճակալի վրա : Հարեւան սենեակից լսում էին հեծկլտանքներ : Մօտեցայ մահճակալին ու ծունկի եկայ . . . ինքնամոռացութիւնից ինձ հանեցին աղիողորմ, սրտամորմոք հառաջանքներ : Գլուխս բարձրացրի . վանեցի քոյրեկն էր, որը ինսամում էր Արամին մինչեւ նրա տիկնոջ երեւան տեղափոխւելը : Արամը լցւեց այցելուներով . . . :

Արամի յուղարկաւորութիւնը համաժողովրդական մեծ սուտ էր :


\*) Այդ ժամանակ Ռոստոմը այլեւս չկար . նա վախճանւեց յունար 18-ին, քայց Արամը չգիտէր :

Հազարաւոր մարդիկ եկել էին վերջին յարդանքը մատուցանելու այն մարդուն, որին վստահել էին իրենց բախտը կեանքի ամենածանր օրերին։ Ես գիտեմ, թէ ինչ է եղել Արամը Երեւանի համար, բայց եւ այնպէս, երբ դագաղը դուրս բերինք բնակարանից, այն ինչ տեսայ դուրսը՝ մի վայրկեան սթափեցրեց մեծ կորուստի ազդեցութիւնը ու զարմանք պատճառեց։ աչքը որ կողմ ուղղում էիր՝ ծով բազմութիւն։ փողոց, տանիք, լուսամուտ, պատշաճամբ՝ ամէն տեղ բոնւած էր մեծ տարածութեան վրա։ ամբողջ քաղաքը, մեծ ուփոքը, դուրս էր եկել փողոց։ Պողոս-Պետրոս եկեղեցուց սկսած մինչեւ հանգստարան դիակառքը մնաց դատարկ։ դագաղը տանում էին ձեռքերի վրա։ Եւ տանողները, գլխաւորապէս, վանեցիներն էին, որոնք յատուկ սէր ու դուրգուրանք ունէին Արամի հանդէպ։ Դաշնակցութեան Տան առջեւ դամբանականներ խօսեցին։ Հոյակապ էր եւ անմոռանալի մանաւանդ Նիկոլ Աղքալեանի խօսքը։ Հանգստատանում խօսեցին Յ. Քաջազնունին եւ ուրիշներ։ Այդ օրը Հայաստանի մայրաքաղաքը համակւած էր ընդհանուր սուրբով . . .



Զգիտեմ, ո՞վ է առաջին անդամ Արամին անւանել Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր։ Բայց եթէ առհասարակ հնարաւոր բան է մի՛ մարդու անւան հետ կապել երկար տարիների ընթացքում դուրգուրած քաղաքական ձգտումների իրականացման այն ձեւակերպումը, որ նա ստացաւ 1918ին, այդ մարդը, ամենայն իրաւամբ, պէտք է լինի Արամը։ Այն օրերին, երբ վերջնականապէս կոփում ու կեանք էր ստանում անկախ հայրենիքի գաղափարը, մեծագոյն դէմքը եւ դէպքերի վրա մեծապէս ազդողը Արամը եղաւ։ Երբ ժամանակը գայ եւ հրատարակութեան տրւին Երեւանի Աղդ։ Խորհրդի դիւանի թղթերը եւ Յատուկ Կոմիտէի արձանագրութիւնները\*), Արամին վերագրւած այդ պատիւը լի ու լի հասկանալի կը լինի գալիք սերունդների համար։ Այս վերջինների առաջ Արամը պատկերանալու է իրեւ ազգային-քաղաքական մի հոյակապ դէմք, իր ժողովրդի ճակատագիրն ու բախտը դարբնող մի հսկայ կամք։

Վրշաց.



\* ) Եթէ միայն նրանք մնացել են եւ բոլշևիկների կողմից վառարանի նիւք չեն դարձել կամ չեն ծախտել Թաւրիզի շուկայում Ֆլշմիշ փաքարելու համար։ ԽՄԲ.